Դատարանն արձանագրում է, որ <<Թոգարմա>> ՍՊԸ-ի և <<Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի>> բժշկական կենտրոն ՓԲԸ-ի միջև 11.10.2024 թվականին կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը, որի 3.1 կետի համաձայն՝ սույն պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման համար Պատվիրատուն կատարողին է վճարում 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ:

Սույն գործով Պատասխանողի ներկայացուցիչը ներկայացրել է հայցադիմումի պատասխան, ապացույցներ, գործը քննվել է գրավոր ընթացակարգով:

Դատարանն ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, նկատի ունենալով, որ հայցը բավարարվում է, գտնում է, որ սույն գործով պատասխանող կողմի փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը կազմում է 80.000 ՀՀ դրամ, ուստի պետք է <<Ագաստ>> ՍՊԸ-ից հօգուտ <<Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի>> բժշկական կենտրոն ՓԲԸ-ի բռնագանձել 80.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը,

ՎՃՌԵՑ

1. <<Ագաստ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի>> բժշկական կենտրոն ՓԲԸ-ի՝ 20.12.2023 թվականին կնքված թիվ ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-02/24-3 ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. <<Ագաստ>> ՍՊԸ-ից հօգուտ <<Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի>> բժշկական կենտրոն ՓԲԸ-ի բռնագանձել 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am